մինչ բարկութիւնն այն անցանի.
դարձեալ բերեն ի սոյն տեղի.
եւ վարձս առցեն ըստ վաստակի...»։ (Տե՛ս նաեւ ՄՁ. Թ. 532)։

Այս յիշատակարանէն զատ, ձեռագիրս սկզբի թերթերուն մէջ երկու կարճ յիշատակարաններ եւս ունի, երկաթագիր. մին՝ կը վերաբերի Կոստանդին Վահկացիին, միւսը՝ Կոստանդին կթղ. Բարձրբերդցիին, վերջնոյս վերաբերեալը նկարէն եւ ոսկիազարդ տառերով գրուած է։ Կոստանդին կթղ. Վահկացին՝ կաթողիկոսանալէ առաջ, հրամանով Կաթողիկոսին և Պրն. Վահրամին, Ցունվար ԺԵ ին ձմրան մէջ կը ճամբորդէ Կաֆա, «վասն նոցա սիրոյ և խաղաղութեան» իր պաշտօնը կը լրացնէ և կը վերադառնայ։ Վերոգրեալ յիշատակարանին մէջ մանրամասնուած են իր ճամբորդութեան պարագաները։ Վահկացի կ'ընտրուի կթղ. 1430ին և կը վախճանի 1439ին։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ, ՂԱՐԱՊԱՂՅԻ (Նուխի).— Կամսարական զինուորական զնդապետ մ'էր, և 1879—1885ին Վանի մէջ հիւպատոս էր Ռուսաց. ժամանակ մը ճամբորդած է Հայաստանի գաւառները, հաւանաբար 1885-87ին։ Նոյն պաշտօնով կը փոխադրուի Համա, Համուս և Դամասկոս. բայց իր բնակութիւնը հաստատած էր Պէյրութ (1886—1895)։ 1887ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը։

1892ին կ'այցելէ Խրիմեան Հայրիկի՝ որ նոյն ատեն կը գտնուէր Երուսաղէմ եւ ընտրուած էր Կթղ. ամենայն Հայոց. իրեն կ'ընկերանար իր տիկինն ալ, որ քոյրն էր Թիֆլիսի Արձագանգ թերթի խմբագիր Սրգար Յովհաննէսեանի։ Կամսարական այս առթիւ այցելած է նաև Յարութիւն Պատրիարքի։ Կաթողիկոս և Պատրիարք երկկոս այցելութիւն կուտան Կամսարականի՝ որ ընդունելութիւն կը կատարէ անոնց Ռուս. Հիւպատոսարանի մէջ։ Կամսարական վերադարձաւ Երուսաղէմէն իր պաշտօնատեղին, ուրկէ քիչ յետոյ մեկնեցաւ Բեռերսպուրկ եւ արժանացաւ Ժէնէրալի պաշտօնին եւ հանգստեան թոշակի՝ իր կենաց վերջին տարիները անցուց Ֆրանսայի մէջ՝ ուր խոր ծերութեան մէջ վախճանեցաւ քանի մը տարի առաջ։

Հանգուցեալ Կամսարական իր պաշտօնավարած տեղերը թողած է մարդասէր և բարեպաշտ անձի մը համբաւը։